սակայն այնպես, որ հարկ եղած ժամանակ չաթանի ծայրերը միացնելով՝ մուտքը փարելի է փակել ներսը մտնել փորձող անասունի կամ շան առջև։ Վրանի կմախքը ծածկվում է թաղիքով, որն ավելի է պահպանում անձրևաջրից, կամ մի երկու տակ փալասով կամ հին գորգով, գլխավորապես անձրևից պաշտպանելու համար։ Հեռատես և փորձված սարվորները քամուց պաշտպանվելու համար ամբողջ կազմվածքը դրսից կապում են երկար չվանով կամ պարանով, սակայն դա երբեմն չի պաշտպանում լեռնային մրրիկից։ Երբեմն պատահում է, որ քամին գչլում՝ պոկում է վրանի ծածկը կամ նույնիսկ շրջում է ամբողջ կառուցվածքը։ Այդպիսի վտանգից իրեն ապահովելու համար ծածկող թաղիքի կամ կաբպետի ծայրերից կախում են քարեր։

Թե ո՞րչափ ալաչուխի այս ձևը զուտ տեղական սովորություն է և յուրացված է տեղում Ասիայի խորքերից ներխուժած թաթարա-մոնղոլական էթնիկ տարրի կողմից և թե՞ արդյոք, ընդհակառակը՝ այս նորամուտ էթնիկ տարրն է, որ իր հետ է բերել իր վրանակազմության ձևը և տեղացիներին ընդունելի դարձրել— սա դժվար լուծելի խնդիր է, քանի որ տեղեկություն չունենք վրանակազմության այն ձևերի մասին, որ մշակված են եղել հնուց տեղում, ինչպես որ նաև չունենք անվիճելի ծանոթություն թաթար-մոնղոլների Անդրկովկաս բերած հայրենի վրանի ավանդական ձևերի մասին։ Միջինասիական և մոնղոլական ժամանակակից վրանների ձևերի մեջ չենք հանդիպում Զանգեզուրի երկարավուն տիպին[22]։ Այնտեղ բացառապես իշխում է կլոր վրանը, որի աղեղները խաչաձևվում են կենտրոնում, առանց տակից այդտեղ նեցուկ-սյուն ունենալու, հիշեցնող ավելի կոովա տիպին։ Այս տիպը մի ձևափոխություն է վրանի այն տիպի, որտեղ ձողերը տնկված են լինում շրջանակի, իսկ ձողերը առանց կորացնելու, ծայրերով իրար միանալով՝ սրածայր գագաթ են կազմում։ Վերը դրված հարցին պատասխանելը գուցե որոշ չափով դյուրանա, եթե աչքի առջև ունենանք այն հանգամանքը, որ Զանգեզուրի քարե շենքերի մեջ տեղական ճարտարապետական ճաշակը սիրում է երկար թաղակապ ձևը, ինչպես դա երևան է գալիս, օրինակ՝ բրատակնէրի առջև ավելացվող դալան պատշգամբների մեջ, Մելիք Փարմազի և Օրբելյան Հովհաննես-բեկի սրահ-ընդունարանների մեջ, վերջապես բոլոր գյուղերի եկեղեցական շենքերի մեջ— լինեն նրանք մեկ թե երեքնավանի բազիլիկաներ միշտ ունենում են երկարացրած թաղակապ առաստաղ։ Այստեղ կարելի է մտաբերել և այն բանը, որ երկարավուն վրանը շատ է հիշեցնում Զանգեզուրի համար այնքան հարազատ քարանձավները, որոնց առաստաղը երբեք չի լինում հորիզոնական կամ կիսագնդակաձև և ձևավորված է լինում մեծ մասամբ որպես երկարացրած թաղ։

Օջախը սովորաբար շինվում է վրանի մեջ հենց մուտքի աջ կամ ձախ կողմում։ Դա մի փոքր փոսիկ է և կողքերին երկու քար՝ վրան կերակրի ամանը դնելու համար։ Կրակը վառելիս՝ վրանի այդ կողմից թաղիքը բարձրացնում են և չաթանը ետ են քաշում՝ ծխին ազատ ելք տալու համար։ Մի այլ օջախ էլ պատրաստվում է վրանից դուրս՝ պարզ ու հանգիստ եղանակին կրակն այնտեղ բորբոքելու համար։ Հաց թխելու համար փորվում է վրանից դուրս ժամանակավոր բորէն, շատ անգամ քարերով պատած և կողերը կավով մի կերպ սվաղած հոր։ Բորէնի վրա սարքվում է նախնական ձևով ծածկ, իսկ քամուց պաշտպանելու համար կողքերին ճեմից կամ քարից շարված կիսա-

---

[22] Տե՛ս Харузин Н., Кибитки среднеазиатских и монгольских народов.